

10 մարտի 2020թ.

Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան № UGS-01 «5 ինքնավար արևային ֆոտովոլտային էլեկտրակայաններ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի համար» մրցույթի վերաբերյալ 10.03.2020թ. ժամը 14:46 procurement@atdf.am էլ.փոստի հասցեով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.

Հարց 1. Մրցույթի պայմաններում նշված է պահանջ՝

Տեղակայվող ՖՎ կայանները պետք է ապահովեն բարձր հուսալիություն, ինչպես նաև նախագծված և պատրաստված լինի տեղական և միջազգային ստանդարտներին համապատասխան:

Սա նշանակում է, որ կայանների կառուցումից առաջ պետք է ներկայացվեն նախագծեր լիցենզավորված

ընկերության կողմից, թե՞ դա պարտադիր չէ: Եվ ինչ-որ կոնկրետ ստանդարտների պահանջ կա՞ :

Պատասխան՝ Համաձայն էներգետիկայի մասին ՀՀ օրենքի 59-րդ 6-րդ կետի՝

«6. Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը արևային էներգիայի կիրառմամբ ինքնավար էներգաարտադրողների տեղակայանքների դրվածքային հզորությունը կարող է հասնել էլեկտրական էներգիայի իրենց սպառիչների տեղակայված ընդհանուր հզորությանը, բայց ոչ ավելի, քան 500 կիլովատ, որոնց գործունեությունը ենթակա չէ կարգավորման կառուցման և արտադրության ժամանակահատվածներում:»

Դա նշանակում է, որ կայանների նախագիծ պետք չէ:

Մինևույն ժամանակ հայտնում եմ որ ստանդարտները բերված են տեխնիկական բնութագրերի նվազագույն պահանջների համախմբում:

Հարց 2. Մրցույթի պահանջներում կա պահանջ, որ հողանցման կոնտուրի դիմադրությունը և ինվերտորի սինուսոիդալությունը պետք է չափվի և հաստատվի մասնագիտացված անձնակազմի կողմից:

Սա նշանակում է, որ այդ չափումները պետք է կատարվեն լիցենզավորված ընկերության կողմից, թե՞ դա պարտադիր չէ:

Պատասխան՝ Բերված պահանջը նշանակում է, որ տվյալ չափումները պետք է իրականացվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված էներգետիկայի բնագավառի մասնագիտացված կազմակերպությունները: